Հավելված
ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2025թ. հունվարի 30-ի թիվ 10-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

I. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
II. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3
III. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5
IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 6
V. ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 8
VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 9
VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 12

II. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 101-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 նոյեմբերի 4-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական և համապատաս-

[1] «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

[2] «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

խանության հաշվեքննությունների մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Հակոբ Միհրանյանը:

III. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննության ենթակա ծրագրային միջոցառումներից «Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառումների գծով կատարված ծախսերի (հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ընդամենը 237.5 մլրդ. դրամ դրամարկղային ծախսի շուրջ 68.8%-ը) օրինականության և հաշվետվությամբ արտացոլված ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու նպատակով հայցված տեղեկատվությունը տրամադրելու համար ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) առաջարկել է ներկայացնել հայցվող տեղեկատվության ձևաչափը: Հաշվեքննության իրականացման վերջնաժամկետով պայմանավորված՝ հայցվող տեղեկատվության ձևաչափը կտրամադրվի և միջոցառումների հաշվեքննության աշխատանքները կշարունակվեն հաջորդ՝ 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության շրջանակներում:

Հաշվեքննության ենթարկված «Հարկային և մաքսային ծառայություններ», «Դրոշմապիտակների ձեռքբերում» և «Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարների վերադարձ» միջոցառումների գծով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

IV. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ[3]

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված 24,295,413.36 հազ. դրամ դրամարկղային ծախսով «1023-11001 - Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման մասով հայցված տեղեկատվության մի մասը տրամադրվել է առանց անալիտիկ բացվածքի[4], որի գծով կատարված ծախսը կազմել է 188,135.9 հազ. դրամ:

Հաշվեքննության ենթարկված երեք ծրագրային միջոցառումների գծով կատարված 70,434,045.26 հազ. դրամ (շուրջ 29.6%) ծախսի մասով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն արձանագրվել:

Հաշվեքննիչ պալատի կողմից հայցվել է Կոմիտեում շահագործվող էլեկտրոնային կառավարման համակարգերին (ՊԵԿ տեղեկատվական բազա, ավտոմատացված վերլուծական և ինքնաշխատ ծանուցման համակարգ, հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգ, «Հարկատու 3», «Ստուգումների կազմակերպման էլեկտրոնային» ավտոմատացված տեղեկատվական համակարգ, Mulberry և այլն) առցանց հասանելիություն, սակայն «Mulberry» համակարգին հասանելիություն չի տրամադրվել:

2024 թվականի ինն ամիսների ընթացքում հավաքագրվել են 1,710.1 մլրդ. դրամի հարկային եկամուտներ՝ ապահովելով 140.3 մլրդ. դրամի աճ՝ նախորդ տարվա համադրելի ցուցանիշի նկատմամբ: Հարկային մուտքերի ձևավորման գործընթացներն իրականացվում են ինքնաշխատ համակարգերով՝ էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի միջոցով: Հաշվեքննիչ պալատի կողմից նշված էլեկտրոնային համակարգերը հաշվեքննության չեն ենթարկվել:

Կոմիտեի 2024 թվականի ինն ամիսների ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արդյունքներով արձանագրված այլ

---

[3] Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

[4] Բյուջեներից վճարումների հաշվառման հիմքը գանձապետական հաշիվներից համապատասխան միջոցների ելքագրումը հավաստող սկզբնական փաստաթղթերն են: Գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը արձանագրվում են օրենքով սահմանված պարտադիր վավերապայմաններ ունեցող սկզբնական հաշվառման փաստաթղթերով, որոնց հիման վրա էլ կատարվում են հաշվապահական հաշվառման գրանցումները (Հիմք՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

փաստերը և հետհսկողական գործընթացը ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 6-րդ և 7-րդ բաժիններում:

V. ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Կոմիտեին՝ որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների պլանով նախատեսվել է 246,942,895.90 հազ. դրամի ծախս, որն ավելացել է 3,045,623,16 հազ. դրամով: Ճշտված պլանը կազմել է 249,988,519.06 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 240,434,174.78 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 237,495,813.18 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 238,280,398.42 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 95%, ըստ ծրագրերի կատարողականների ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1 ում:

Աղյուսակ 1. 2024 թվականի պետական բյուջեի ինն ամիսների ցուցանիշները

(հազ.դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		246,942,895.90	249,988,519.06	237,495,813.18	238,280,398.42
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	129,264.00	120,927.19	134,927.19
1023	Հարկային և մաքսային ծառայություններ	26,205,895.90	29,032,255.06	24,295,413.36	25,065,987.89
1102	Կենսաթոշակային ապահովություն	130,350,000.00	130,350,000.00	129,055,471.29	129,055,471.29
1205	Սոցիալական ապահովություն	38,475,000.00	38,475,000.00	34,394,389.32	34,394,389.32
1235	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում	-	90,000.00	-	-
1239	Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարի վերադարձ	51,912,000.00	51,912,000.00	49,629,612.02	49,629,612.02

VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. 1102-12005 «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ» ԵՎ 1205-12009 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«1102-12005 - Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառման շրջանակներում 2024 թվականի ինն ամիսների պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 130,350,000.00 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պլանում փոփոխություններ չեն կատարվել: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 129,055,471.29 հազարական դրամ՝ ճշտված պլանի 99.01%-ը:

«1205-12009 - Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման շրջանակներում 2024 թվականի ինն ամիսների պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 38,475,000.00 հազ. դրամ, նույնքան կազմել է նաև ճշտված պլանը: Դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 34,394,389.32 հազարական դրամ՝ ճշտված պլանի 89.39%-ը:

«Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառումների գծով կատարված ծախսերի (հաշվետու ժամանակաշրջանում իրականացված ընդամենը 237,495,813.18 հազ. դրամ դրամարկղային ծախսի շուրջ 68.8%-ը) օրինականության և հաշվետվությամբ արտացոլված ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու նպատակով հայցված տեղեկատվությունը տրամադրելու համար Կոմիտեն առաջարկել է ներկայացնել հայցվող տեղեկատվության ձևաչափը: Հաշվեքննության իրականացման վերջնաժամկետով պայմանավորված՝ հայցվող տեղեկատվության ձևաչափը կտրամադրվի և միջոցառումների հաշվեքննության աշխատանքները կշարունակվեն հաջորդ՝ 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության շրջանակներում:

Կոմիտեի արձագանք

Կոմիտեն վերը նշված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը չի տրամադրել Հաշվեքննողին՝ հիմնավորմամբ, որ հստակեցման կարիք ունի «կատարված ծախսը հիմնավորող փաստաթղթերը՝ անալիտիկ բացվածքով»

հարցումը, միաժամանակ նշելով, որ «Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» և «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառումների շրջանակներում կատարված ծախսը հիմնավորող տեղեկատվություն տրամադրելու համար անհրաժեշտ է ներկայացնել պահանջվող տեղեկատվության ձևաչափը՝ տեղեկատվության տրամադրումը ճիշտ կազմակերպելու նպատակով:

Հաշվեքննողների մեկնաբանություն

Բյուջեներից վճարումների հաշվառման հիմքը գանձապետական հաշիվներից համապատասխան միջոցների ելքագրումը հավաստող սկզբնական փաստաթղթերն են[5]: Գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը արձանագրվում են օրենքով սահմանված պարտադիր վավերապայմաններ ունեցող սկզբնական հաշվառման փաստաթղթերով, որոնց հիման վրա էլ կատարվում են հաշվապահական հաշվառման գրանցումները[6]:

Հաշվապահական հաշվառման գրանցումներն, ըստ առանձին հոդվածների և ծախսատեսակների տեղեկատվությունն ընդհանրացնելու համար, կատարվում են Հաշվային պլանով սահմանված ենթանալիտիկ, անալիտիկ և սինթետիկ հաշիվներում, դրանց կիրառման հրահանգին համապատասխան:

Հաշվեքննության իրականացման վերջնաժամկետով պայմանավորված՝ հայցվող տեղեկատվության ձևաչափը կտրամադրվի և միջոցառումների հաշվեքննության աշխատանքները կշարունակվեն հաջորդ՝ 2024 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության շրջանակներում:

2. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2024 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 1,856.8 մլրդ դրամ, որը շուրջ 154 մլրդ. դրամով ավելի է, քան 2023 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճով, որը կազմել է 8.94% (Աղյուսակ 2):

[5] Հիմք՝ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշման 27-րդ կետ:

[6] Հիմք՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ինն ամիսների եկամուտների կատարողականը

(հազ.դրամ)

Անվանում	2023թ. 9 ամիսների եկամուտներ	2024թ. 9 ամիսների եկամուտներ	Եկամուտների տարբերու-թյուն	Եկամուտների տարբեր-ություն %
Հարկային եկամուտներ	1,569,788,307.25	1,710,086,818.28	140,298,511.03	108.94%
Պետական տուրք	47,261,881.33	57,148,973.17	9,887,091.84	120.92%
Պաշտոնական դրամաշնորհներ	-	9,550,247.51	9,550,247.51	-
Այլ եկամուտներ	85,495,867.80	80,036,887.59	(5,458,980.21)	93.61%
Ընդամենը պետական բյուջեի եկամուտներ	1,702,546,056.37	1,856,822,926.55	154,276,870.18	109.06%

Հարկային մուտքերի ձևավորման գործընթացներն իրականացվում են ինքնաշխատ համակարգերով: Տնտեսվարողների կողմից հաշվետվությունները և մաքսային հայտարարագրերը ներկայացվում են էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի միջոցով:

Հաշվեքննիչ պալատի կողմից նշված էլեկտրոնային համակարգերը հաշվեքննության չեն ենթարկվել:

Կոմիտեի արձագանք

Կոմիտեի կողմից վերահսկվող հարկային եկամուտների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության կապակցությամբ նկատառումներ չունի:

VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է «1023-31003 - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման իրականացման ընթացքը: Միջոցառման շրջանակներում 2024 թվականի վեց ամիսների պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 1,034,317.40 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 1,034,317.4 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 712,318.77 հազ. դրամ՝ ճշտված պլանի 68.87%-ը:

ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի N 621-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող 19.1 հա ընդհանուր մակերեսով հողամասը և 23,616.9 ք/մ մակերեսով շենքերը և շինությունները (այսուհետ՝ գույք)՝ 07-053-0156-0013 կադաստրային ծածկագրով, 1,384,765,000 դրամ հաշվեկշռային արժեքով, հետ է վերցվել ՀՀ պաշտպանության նախարարությունից և ամրացվել Կոմիտեին: Կոմիտեին հանձնարարվել է նաև՝ իրականացնել նշված գույքի տեխնիկական վիճակի հետազննություն[7]:

ՀՀ պաշտպանության նախարարի և Կոմիտեի նախագահի կողմից հաստատված (25.06.2022թ. և 06.07.2022թ.) գույքի հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ հանձնման-ընդունման ժամանակ համատեղ իրականացվել է 23,616.9 ք/մ մակերեսով շենքերի և շինությունների ակնադիտական ուսումնասիրություն:

Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի կողմից 2009 թվականի օգոստոսի 13-ին հաստատվել է պետական գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կանոնակարգելու մասին N 74-Ն հրամանը (այսուհետ՝ Հրաման): Հրամանի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ գույքի արժեքի բացակայության դեպքում գնահատող կազմակերպության (անկախ գնահատողի) կողմից ներկայացված գնահատման եզրակացությամբ (հաշվետվությամբ) նշված արժեքը ներառվում է գույքի հանձնման-ընդունման ակտում որպես գույքի արժեք:

---

[7] ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանի հավելված 1-ով հաստատվել են բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումները, մասնավորապես, կիրառում են հետազննության երկու ձևեր՝ դիտողական և դիտողագործիքային: Դիտողական հետազննության ժամանակ ի հայտ են բերվում և նշվում են (անհրաժեշտության դեպքում լուսանկարվում են) երևացող թերությունները, դեֆորմացիաները, կոնստրուկցիաների տարրերի չափերի, ձևի ու դիրքի շեղումները, ճաքերի առկայությունն ու տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև մեխանիկական, կոռոզիոն, կենսաբանական, այրվածքային և այլ տիպի վնասվածքները: Անհրաժեշտության դեպքում բացվում են կոնստրուկցիաները, ինչպես նաև ժամանակավոր ամրակապվում և ցանկապատվում են վթարային վիճակում գտնվող կոնստրուկցիաները և վտանգավոր տեղամասերը:

Ի պատասխան 2024 թվականի հուլիսի 19-ի ՊԵԿ թիվ 1/18-2/45214-2024 գրության՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից տեղեկացվել է, որ վերը նշված գույքի քանդման ընթացքում գոյացած մետաղական կոնստրուկցիաների շուկայական արժեքի գնահատման աշխատանքներն իրականացնելու նպատակով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին տրվել է հանձնարարական:

Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» պայմանագրի շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից նախանշած հասցե (ք.Երևան, Էրեբունի, Նուբարաշենի 2) են տեղափոխվել շենքերի քանդման ընթացքում գոյացած մետաղական կոնստրուկցիաները՝ ընդհանուր 103,040 կգ քաշով: Կոմիտեի և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի միջև հանձնման-ընդունման գործընթացն ավարտված չէ՝ հանձնման-ընդունման ակտ կազմված չէ:

Կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված այլ փաստերը Կոմիտեի կողմից ընդունվել են ի գիտություն:

Հակոբ Միհրանյան
Հաշվեքննիչ պալատի անդամ

Digitally signed by
MIHRANYAN HAKOB 110866014
Date: 2025-02-04 14:19:46

«30» հունվար, 2025 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ
Մ.Բաղրամյան 19, Երևան
Հայաստանի Հանրապետություն